ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2019-10-7-Ա

ք. Երևան 24.10.2019թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2019 թվականի հոկտեմբերի 24-ի նիստում քննարկեց 2019 թվականի օգոստոսի 20-ին արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված՝ «Գոլդն գրեյպ արմաս» ՍՊԸ (Երևան, Արամ Խաչատրյան 18, բն. 61, AM) բողոքը (No20181522) «ԱՐՄԱՍ» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Հայտում նշված 29-րդ, 32-րդ և 33-րդ դասերի ապրանքների համար ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման է ՀՀ-ում գրանցման հիման վրա պահպանվող «Chateau ARMAS» («Բիզնես Լիդեր Հոլդինգ» ՍՊԸ, ք. Երևան, Հ. Հակոբյան 3/15, N-18403, 21.05.2012թ., դաս 32, 33), «ԱՐՄԱՇ ԱՐՄԱՍԻ ARMASH» (Արարատի կոնյակի գործարան «Ա.Կ.Զ» ՍՊԸ, Արարատի մարզ, ք. Արարատ, Պուշկինի 12, N-20318, 02.09.2013թ., դաս 33) և «ARMES» («Երկսար» ՍՊԸ, ք. Երևան, Փափազյան 21/1, բն. 45, N-17531, 19.09.2011թ., դաս 29, 32, 33) բառային և համակցված ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 119-րդ կետի 1-ին, 2-րդ ենթակետերի, 122-րդ կետի համաձայն՝ բառային ապրանքային նշաններին նման են համարվում բառային ապրանքային նշանները և համակցված ապրանքային նշանները, որոնց մեջ ընդգրկված են բառային տարրեր, և որոնք ունեն ձայնային նմանություն, որոնց

նմանությունը որոշվել է ձայնային հատկանիշներով: Համեմատելով հայտարկված ապրանքային նշանը ավելի վաղ «Chateau ARMAS» ապրանքային նշանի հետ՝ նիշերը նման են իրենց «ARMAS» և «ԱՐՄԱՍ» գրառումներով, որոնք զուգորդվում են իրենց ձայնային նմանությամբ, իսկ համակցված «ԱՐՄԱՇ ARMAŠ ARMASH» ավելի վաղ ապրանքային նշանի հետ համեմատելիս, նիշերը զուգորդվում են «ԱՐՄԱՇ» և «ԱՐՄԱՍ» գրառումներով և տարբերվում են զուտ վերջին «Ս», «Շ» տառերով, որն էլ էական դեր չի կատարում համեմամտվող նիշերը տարբերել մեկը մյուսից: Ինչ վերաբերում է «ARMES» ավելի վաղ ապրանքային նշանին՝ տվյալ դեպքում համեմատվող նիշերը զուգորդվում են իրենց համեմատվող նշաններում մոտ և համընկնող հնչյունների առկայությամբ, այն է «ARMES» և «ԱՐՄԱՍ»: Անդրադառնալով Ձեր նկատառումներին, առ այն, որ համեմատվող նիշերի փաստացի օգտագործումը տարբերվում է մեկը մյուսից, տեղեկացնում ենք Ձեզ, որ փորձաքննության արդյունքները վերաբերում են հայտարկված բառային ապրանքային նշանին, այլ ոչ թե նրան ինչպես օգտագործվում է, իսկ օգտագործվող համակցված ապրանքային նշանը կարող է ձևակերպվել որպես առանձին հայտ:

Կոլեգիայի անդամը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ հայտարկված ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման է ՀՀ-ում գրանցման հիման վրա պահպանվող «Chateau ARMAS» («Բիզնես Լիդեր Հոլդինգ» ՍՊԸ, ք. Երևան, Հ. Հակոբյան 3/15, N-18403, 21.05.2012թ., դաս 32, 33), «ԱՐՄԱՇ ARMAŠ ARMASH» (Արարատի կոնյակի գործարան «Ա.Կ.Ձ» ՍՊԸ, Արարատի մարզ, ք. Արարատ, Պուշկինի 12, N-20318, 02.09.2013թ., դաս 33) և «ARMES» («Երկսար» ՍՊԸ, ք. Երևան, Փափազյան 21/1, բն. 45, N-17531, 19.09.2011թ., դաս 29, 32, 33) բառային և համակցված ապրանքային նշաններին:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ և շարունակում էր պնդել բողոքում նշված իր հիմնավորումները:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված՝ «ԱՐՄԱՍ» (No20181522) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ